ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԴԻՎԱՆԱՊԵՏ ԳԵՐԾ. Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԶԵԿՈՒՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ 2021 Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎՈՒՄ

(մարտ 7–11, 2022 թ.)

Սույնով ներկայացվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2021 թ. գործունեության ամփոփ տեղեկագիրը։ Տեղեկագիրն ընդգրկում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի, թեմերի, եկեղեցական այլ կառույցների եւ հաստատությունների գործունեությունը։

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվետու տարում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը պաշտոնական այցելությունների եւ ընդունելությունների շրջանակներում ունեցել է 60-ից ավելի հանդիպումներ եկեղեցական ու պետական բարձրաստիճան պատվիրակությունների, ազգային, հասարակական եւ մշակութային շրջանակների ներկայացուցիչների հետ։ Առանձնացնենք այցելություններից եւ ընդունելություններից առավել հատկանշականները։

Այցելություններ

Հունվարի 28-ին, Բանակի օրվա առիթով, «Եռաբլուր» զինվորական պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցելու հանուն հայրենիքի պաշտպանության նահատակված քաջորդիների հիշատակին։

Ապրիլի 29-ին՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ ԱՄՆ հայոց արեւելյան թեմի առաջնորդի, թեմական խորհրդի եւ բարերաների հետ քննարկելու թեմի հովանավորությամբ իրականացվող ծրագրերը։

Հունիսի 3—5-ը՝ հովվապետական այցով Սյունիքի եւ Արցախի թեմեր։

Օգոստոսի 2-ին՝ ՀՀ ԱԺ՝ 8-րդ գումարման առիթով՝ խոսք ուղղելու նորընտիր պատգամավորներին։

Հոկտեմբերի 5-ին՝ Հռոմ՝ մասնակցելու Սանտ Էջիդիոյի համայնքի կողմից կազմակերպված «Մարդիկ որպես եղբայրներ եւ երկրի ապագան. կրոններն ու մշակույթները երկխոսության մեջ» խորագրով համաժողովին եւ միջեկեղեցական աղոթքին։

Հոկտեմբերի 11—13-ը՝ Մոսկվա՝ հանդիպելու Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքի հետ եւ մասնակցելու տարածաշրջանի հոգեւոր առաջնորդների եռակողմ հանդիպմանը։

Դեկտեմբերի 31-ին՝ Սուրբ Ծննդյան տոնին ընդառաջ՝ ՀՀ արեւմտյան սահմանագծի մարտական դիրքեր։

Ընդունելություններ

Ապրիլի 16-ին՝ Արցախյան երկրորդ պատերազմում տարբեր աստիճանների վիրավորումներ ստացած զինվորականներին, որոնք մեկնել են Ավստրիա՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի աջակցությամբ ստանալու անհրաժեշտ հետագա բժշկական օգնությունը եւ վերջույթների պրոթեզավորումը։

Ապրիլի 17-ին՝ Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանին։

Ապրիլի 23-ին՝ Կենտրոնամերիկյան խորհրդարանի նախագահ Ֆանի Կարոլինա Սալինաս Ֆերնանդեսի գլխավորած պատվիրակությանը։

Ապրիլի 25-ին՝ Ֆրանսիայի Հանրապետության Սենատի նախագահ Ժերար Լարշեի գլխավորած պատվիրակությանը։

Հուլիսի 20-ին՝ Եւրախորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անվտանգության, պաշտպանության ենթահանձնաժողովի նախագահ Նատալի Լուազոյին։

Դեկտեմբերի 13-ին՝ Պաղեստինի՝ Եկեղեցիների հարցով բարձրագույն նախագահական կոմիտեի ղեկավար Մուին էլիաս Յուսեֆ Խուրիի գլխավորած պատվիրակությանը։

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ, ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ ԵՒ ՈՒՂԵՐՁՆԵՐ

2021 թ. հրապարակվել է հայրապետական 66 կոնդակ, որով 2 անձ պարգեւատրվել է «Ս. Գրիգոր Լուսաւորիչ», 6-ը՝ «Ս. Սահակ — Ս. Մեսրոպ», 35-ը՝ «Ս. Ներսես Շնորհալի», 20-ը՝ «Սբ. Ղեւոնդ Երեց» շքանշաններով։

Սրբատառ կոնդակով հաստատվել է նաեւ Մասսյացոտնի թեմը։

Շնորհվել է հայրապետական 118 օրհնության գիր։ Խոսքեր եւ ուղերձներ են հղվել ազգային եւ պետական տոների, միջեկեղեցական հանդիպումների եւ մի շարք այլ տոների ու միջոցառումների առիթներով։

Մասնավորապես՝

Ապրիլի 14-ին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հանդես է եկել հայտարարությամբ՝ Բաքվում բացված այսպես կոչված «Ռազմավարի զբոսայգու» վերաբերյալ՝ դատապարտելով հայ զինվորականներին եւ ռազմագերիներին պատկերող անմարդկային եւ նվաստացուցիչ տեսարանների ցուցադրությունը։

Մայիսի 26-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ գումարված քահանայից ամենամյա հավաքի մասնակիցները ժողովի ավարտին հանդես են եկել հայտարարությամբ՝ անդրադառնալով Արցախյան պատերազմի հետեւանքով Հայաստանում եւ Արցախում ստեղծված ծանր իրավիճակին եւ առկա հիմնախնդիրներին։

Հունիսի 10-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցած Հայաստանի եպիսկոպոսների ժողովը հանդես է եկել հայտարարությամբ՝ խոր մտահոգություն հայտնելով Հայաստանի ներքաղաքական կյանքում, արտահերթ խորհրդարանական ընտրությունների շրջանում արձանագրվող մի շարք դատապարտելի երեւույթների առնչությամբ։

Հունիսի 20-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորագիր է հղել էբրահիմ Ռայիսիին՝ Իրանի Իսլամական Հանրապետության նախագահի պաշտոնում ընտրվելու կապակցությամբ։

Հոկտեմբերի 29-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարված հայաստանյան եպիսկոպոսների ժողովը հանդես է եկել ՀՀ Ազգային ժողովի կողմից «Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» օրենքում Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների վերաբերյալ փոփոխություններ կատարելու առաջարկով։

Նոյեմբերի 16-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հանդես է եկել հայտարարությամբ՝ խոր անհանգստություն հայտնելով Հայաստանի Հանրապետության արեւելյան սահմանին Ադրբեջանի կողմից սանձազերծված մարտական գործողությունների առնչությամբ։

ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐ

2021 թ. ընկալյալ կարգով շարունակվել է հաղորդակցությունը Նվիրապետական Աթոռների հետ. տեղի են ունեցել փոխայցելություններ, համատեղ քննարկումներ։

Անխափան շարունակվել են հարաբերություններն Ամենայն Հայոց Կաթողիկոսության եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միջեւ։

Անցած տարում Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության եւ Սիրիայի կառավարության հետ բանակցություններ են իրականացվել՝ առնչված Դամասկոսի հայոց թեմի կարգավիճակին։

Տեղ գտած որոշ սխալմունքների հետեւանքով նվազեցվել էր Դամասկոսի հայոց թեմի կարգավիճակը՝ Սիրիայի հայության հոգեւոր իշխանության լիազորությունները վերապահելով Բերիո (Հալեպ) հայոց թեմին։

Բանակցությունների շնորհիվ վերականգնվել է կանոնական վիճակը, եւ Դամասկոսի հայոց թեմը շարունակում է գործել իր նախընթաց կարգավիճակով՝ որպես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կառույց։

Նախորդ տարում Երուսաղեմի հայոց պատրիարքարանի կողմից «Կովերի պարտեզ» կալվածքի վարձակալության հանձնելու խնդիրը լայն արձագանք էր ստացել հրապարակային տարբեր հարթակներում։

Նոյեմբեր 11, 2021 թվակիր հայտարարությամբ ԳՀԽ-ն իր մտահոգությունը հայտնեց, որ այս հարցի շուրջ պատրիարքարանի եւ միաբանության որոշ անդամների տարբերակված դիրքորոշումների հետեւանքով խաթարվել են Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց զինվորյալ միաբանության ներքին համերաշխությունն ու միասնականությունը։ Խիստ անհանգստացնող համարվեց նաեւ, որ առկա իրավիճակը, հանրության տարբեր շրջանակներում աննպաստ մեկնաբանությունների ու տրամադրությունների տեղիք տալով, հարվածում է մեր նվիրապետական հինավուրց Աթոռի հեղինակությանը։

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից գրություն էր ուղղվել Երուսաղեմի Հայոց Պատրիարքին՝ հորդորելով պատշաճ լուսաբանությամբ ու ժողովական տնօրինություններով փարատել մտահոգությունները եւ միաբանության մեջ վերականգնել համերաշխությունը։

Նախորդ տարում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին է ժամանել Կ. Պոլսի հայոց պատրիարքության միաբան Հոգշ. Տ. Հարություն աբղ. Տամատյանը, որ ծառայության է կոչված Մայր Աթոռում։ Իր ծառայությունն է Մայր Աթոռում շարունակում նաեւ Հոգշ. Տ. Զատիկ վրդ. Պապիկյանը։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՊԱՇՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եկեղեցականության ընդհանուր թիվը 781 է.

- *50 արքեպիսկոպոս եւ եպիսկոպոս,*
- *52 ծայրագույն վարդապետ եւ վարդապետ,*
- *21 աբեղա,*
- *493 քահանա,*
- *165 սարկավագ (121-ը՝ միաբան, 44-ը՝ ճեմարանական)։*

2021 թ. 14 սարկավագ կոչվել է քահանայության՝ 13-ը՝ ամուսնացյալ, 1-ը՝ կուսակրոն։

Սարկավագական ձեռնադրություն է ստացել 44 ճեմարանական ուսանող։

Հաշվետու տարում Վեհափառ Հայրապետի կողմից 18 քահանա արժանացել է լանջախաչ, 20-ը՝ ծաղկյա փիլոն կրելու իրավունքի, եւ 5-ը՝ ավագ քահանայության։

Ցավոք, տարին զերծ չի եղել նաեւ եկեղեցականների կորուստներից։ Համավարակի եւ այլ պատճառներով ի Տեր ննջեցին Գերշ. Տ. Գյուտ արք. Նագգաշյանը, Հոգշ. Տ. Մաղաքիա վրդ. Ամիրյանը, Հոգշ. Տ. Մամբրե աբղ. Տաշչյանը, Արժ. Տ. Մովսես ավ. քհն. Ղազարյանը, Արժ. Տ. Տաթեւ ավ. քհն. Թաթուլյանը, Արժ. Տ. Կյուրեղ քհն. Տալյանը եւ Կ. Պոլսի հայոց պատրիարքության միաբան Հոգշ. Տ. Թաթուլ ծ. վրդ. Անուշյանը։

Արցախյան 44-օրյա պատերազմից հետո Հոգշ. Տ. Մկրտիչ աբղ. Կարապետյանը համարվում է անհետ կորած։

2021-ին կարգալույծ է հռչակվել 4 հոգեւորական՝ 3 կուսակրոն եւ 1 ամուսնացյալ (Արթուր Գեւորգյան (Սիփան վրդ. Գեւորգյան), Գագիկ Հովհաննիսյան (Գեղարդ աբղ. Հովհաննիսյան), Նորայր Ազարյան (Պետրոս աբղ. Ազարյան), Հայկ Պետրոսյան (Տեր Ղազար քհն. Պետրոսյան))։

Հաշվետու տարում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բաժիններում եւ ենթաբաժիններում աշխատել է 1030 անձ։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Անցյալ տարում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կանոնավորապես գումարվել են Գերագույն հոգեւոր խորհրդի՝ 2 (փետրվար 22–27, նոյեմբեր 8–13) եւ հայաստանյան Եպիսկոպոսների ամենամսյա ժողովներ։

Ժողովների ընթացքում քննարկումներ են ծավալվել հետպատերազմական իրավիճակում, ներքաղաքական ճգնաժամի եւ ներազգային կյանքում ահագնացող ատելության մթնոլորտում Եկեղեցու գործունեության վերաբերյալ։ Քննարկվել են նաեւ Նվիրապետական Աթոռներին, թեմերին, ազգային-հասարակական կյանքին վերաբերող հարցեր, համապատասխան հանձնարարականներ են տրվել հոգեւոր խնամքի, սոցիալական աջակցության տրամադրման եւ ծիսական կյանքի կազմակերպման ուղղությամբ։

Փետրվարի 9-ին՝ Սրբոց Ղեւոնդյանց տոնին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, տեղի է

ունեցել ամենամյա ավանդական քահանայից հավաքը, որին մասնակցել է 230 եկեղեցական՝ հայաստանյան թեմական առաջնորդները, Մայր Աթոռի միաբանությունը եւ 188 քահանա հայրեր։

Բացի հիշյալ ժողովներից՝ գումարվել են նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից ստեղծված հանձնախմբերի եւ խորհուրդների ժողովներ։

ԵԿԵՂԵՑԻ–ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եկեղեցի–պետություն հարաբերություններն ընդգրկում են բովանդակային ընդարձակ շրջան, որում կարգավորման են ենթակա այնպիսի հարցեր, ինչպիսիք են կրթության, հավատացյալների սոցիալական աջակցության, պատմամշակութային հուշարձանների պահպանության, առողջապահության, ազգային անվտանգության եւ նմանաբնույթ մի շարք այլ ոլորտների հիմնախնդիրները։

Անկախության պատմության ողջ ընթացքում պետության հետ հարաբերություններում բացարձակապես սպառված չեն եղել բոլոր այն խնդիրները, որոնք առնչվել են պետական ու եկեղեցական կարեւորագույն տոների առիթներով կազմակերպվող միջոցառումների արարողակարգային ոլորտին։ Հիշյալ խնդիրները, սակայն, շատ ավելի մեծ ծավալ են ստացել վերջին տարիների ընթացքում։ Էականորեն նվազել է կարեւորագույն միջոցառումներին եւ տոնական օրերին Եկեղեցու եւ պետության համատեղ մասնակցության վիճակագրությունը։

Արցախյան պատերազմի հետեւանքով երկրում ստեղծված աղետալի իրավիճակը հանգեցրել է անվտանգության, տնտեսական, սոցիալական, հոգեբանական սուր հիմնախնդիրների, ստեղծել արտաքին քաղաքական լուրջ մարտահրավերներ։

Հակառակ սույն մարտահրավերների առջեւ ազգային համախմբվածության հրամայականներին՝ առ այսօր տեսանելի չեն այնպիսի քայլեր, որոնք կվկայեն իշխանությունների կողմից համազգային խնդիրների հաղթահարման գործում Եկեղեցուն ներգրավվելու պատրաստակամության մասին։ Այս առումով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն անգամ պատշաճ իրազեկվածություն չունի կարեւորագույն այնպիսի խնդիրների շուրջ ընթացող գործընթացների վերաբերյալ, ինչպիսիք են Արցախի

կարգավիճակի, սահմանագծման (դեմարկացիա) եւ սահմանազատման (դելիմիտացիա), հայ ռազմագերիների իրական թվաքանակի եւ նրանց վերադարձի ուղղությամբ իրականացվող քայլերի, հայ-թուրքական բանակցությունների ընթացքի, այդ շրջագծում Հայոց ցեղասպանության վերաբերյալ առկա մոտեցումների եւ նմանօրինակ կարեւորագույն այլ հիմնահարցերի վերաբերյալ։

Մայր Աթոռը բազմիցս հանդես է եկել հայտարարություններով եւ պաշտոնական գրություններով՝ ուղղված ինչպես հայոց իշխանություններին եւ ժողովրդին, այնպես եւ միջազգային պետական ներկայացուցիչներին եւ կառույցներին։

2021 թ. հունիսի 7-ին մեկնարկած նախընտրական քարոզարշավի առաջին իսկ օրերից տեղ գտած ատելության խոսքերին, վարկաբեկիչ եւ վիրավորական արտահայտություններին, հայհոյանքներին, հաշվեհարդարներով ու բռնությամբ սպառնալու վարքագծին եւ ի մասնավորի՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչապետի թեկնածու Նիկոլ Փաշինյանի՝ Հայոց Եկեղեցու հասցեին հնչեցրած շարունակական հանիրավի մեղադրանքներին ի պատասխան՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հանդես է եկել բազմաթիվ հայտարարություններով՝ ատելության խոսքից եւ անհանդուրժողականությունից զերծ մնալու, զգոնություն եւ օրինահարգություն դրսեւորելու, ինչպես նաեւ հայրենական կյանքը նոր փորձություններով չվտանգելու կոչերով։

Արցախյան երկրորդ պատերազմի հետեւանքների հաղթահարման ուղղությամբ տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցաբար՝ Հայ Եկեղեցու կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ առնչված տեղահանված արցախցիների օժանդակությանը, ռազմագերիների վերադարձմանը, անհայտ կորածների հայտնաբերմանը, զոհվածների աճյունների նույնականացմանը եւ հուղարկավորությանը։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔ

Հետպատերազմական իրավիճակով եւ ներքաղաքական ճգնաժամով պայմանավորված՝ հանրային միջոցառումների քանակն էապես նվազել

է։ Այսուհանդերձ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կազմակերպվել են տարբեր հանդիպում-միջոցառումներ։

Նշենք դրանցից մի քանիսը.

• Մարտի 3-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնակցել է «Հայկական լեռնաշխարհի եւ դրա հարակից տարածքների ժողովուրդների քրիստոնեական պատմական-մշակութային ժառանգությունը» առցանց համաժողովին, որը կազմակերպվել էր Եւրոպայի հայկական միությունների ֆորումի (Շվեդիա), Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգության հարցերով գրասենյակի, «Վիեննայի ակումբ» քաղաքական եւ տնտեսական վերլուծության համաեւրոպական կենտրոնի եւ «ՊԱՆԱՊ» խաղաղության պաշտպանության դաշինքի կողմից (Սլովակիա)։

• Հուլիսի 15-ին, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Ս. Գայանե վանքում կատարվել է Հանրապետական մաղթանք՝ հայրենիքի խաղաղության եւ ապահովության համար, նաեւ տեղի է ունեցել Արցախյան 44-օրյա պատերազմին մասնակից եկեղեցականների պարգեւաբաշխություն։

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անցյալ տարում շարունակվել են քույր Եկեղեցիների, միջկրոնական տարբեր կազմակերպությունների հետ բնականոն հարաբերությունները։ Համավարակի պատճառով միջոցառումները եղել են խիստ սահմանափակ։

Նշենք դրանցից կարեւորները.

Սեպտեմբերի 8—12-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարվել է «Խաղաղություն եւ կրոնական ազատություն. հոգեւոր, պատմական ժառանգության պահպանության խրախուսում» թեմայով միջազգային համաժողով (կոնֆերանս)։

Հոկտեմբերի 5—8-ը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնել է Հռոմ՝ մասնակցելու Սանտ Էջիդիոյի համայնքի կազմակերպած ամենամյա ավանդական հավաքին եւ խաղաղության աղոթքին, որտեղ Ամենայն Հայոց Հայրապետը հանդես է եկել բանախոսությամբ՝

անդրադառնալով Արցախի Հանրապետության դեմ 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի սանձազերծած պատերազմին։ Այս շրջանակներում Ամենայն Հայոց Կաթողիկոսը Վատիկանում հանդիպում է ունեցել Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի, Բարդուղիմեոս Ա. Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքի հետ։

Միջազգային հավաքի եզրափակիչ փուլը տեղի է ունեցել Հռոմի «Կոլիզեում» պատմական հուշարձանի դիմաց, որին ներկա էր նաեւ Գերմանիայի Դաշնության կանցլեր Անգելա Մերկելը։ Հայոց Հայրապետն իր քարոզում անդրադարձել է ներկա օրերին, երբ բռնություններն ու պատերազմները, էթնիկ խտրականությունն ու կրոնական ծայրահեղականությունը եւ դրանց հիմքի վրա իրագործվող ոճրագործություններն ավերներ են գործում, եւ աշխարհը կարիք ունի խաղաղության ու ապահով կյանքի վերահաստատման։

Հոկտեմբերի 12-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորած պատվիրակությունը Մոսկվայում՝ Ս. Դանիելի պատրիարքանիստ վանքում, հանդիպում է ունեցել Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Ա. Պատրիարքի հետ։ Քննարկվել են Արցախի, Հայ եւ Ռուս Եկեղեցիների համագործակցությանը, ինչպես նաեւ հայ-ռուսական հարաբերություններին առնչվող մի շարք հարցեր։

Հոկտեմբերի 13-ին Մոսկվայում՝ Ս. Դանիելի պատրիարքանիստ վանքում, տեղի է ունեցել Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի հոգեւոր առաջնորդների հանդիպումը՝ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքի միջնորդությամբ։ Սա, 1988 թվականից սկսած, ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանն ի նպաստ, այս ձեւաչափով 17-րդ հանդիպումն է։

Եռակողմ հանդիպման ընթացքում քննարկվել են հայ ռազմագերիների վերադարձման, Ադրբեջանի տիրապետության տակ անցած հոգեւոր-մշակութային կոթողների պահպանության եւ մի շարք այլ հարցեր։ Եւս մեկ անգամ հաստատվել է, որ արցախյան հակամարտությունը չունի կրոնական բնույթ։

ՀՈԳԵՒՈՐ-ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայր Աթոռի հոգեւոր-կրթական բարձրագույն հաստատություններում 2021-ին ընդհանուր առմամբ ուսանել է 107 սան, որոնցից 44-ը՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանում, 53-ը՝ Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում, եւ 10-ը՝ Քահանայից պատրաստման եռամյա լսարանում։

Հառիճի Թրբանճյան ընծայարանի 3 դասարաններում ուսանել է 15 աշակերտ։ Ընծայարանն ավարտած սաներից որոշները 2021-ի օգոստոսին մասնակցել են Գեւորգյան հոգեւոր ճեմարանի ընդունելության քննություններին։

Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարանում եւ Դավթյան օրիորդաց վարժարանում ուսանել է 50 աշակերտ։ Համավարակի պատճառով Հնդկաստանում ստեղծված խիստ սահմանափակումների հետեւանքով արդեն գրեթե երկու տարի դասերն ընթանում են հեռավար ուսուցմամբ, եւ աշակերտներն ստիպված են դասերին մասնակցել իրենց բնակության վայրերից՝ Իրաքից, ՌԴ-ից, Իրանից, Հնդկաստանից, Մյանմարից եւ Հայաստանից։

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2021-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կրթական գործունեությունը շարունակել է իրականացվել հետեւյալ ուղղություններով՝

Հայորդյաց տներ

Մայր Աթոռի 7 Հայորդյաց տները (Էջմիածին, Աշտարակ, Գյումրի, Վանաձոր, Երեւանում՝ Նորք, Մալաթիա եւ Արաբկիր) եւ Մանրանկարչության արվեստի կենտրոնը նույնպես շարունակել են իրենց գործունեությունը հաշվետու տարում, որտեղ հաճախող ավելի քան 2570 երեխա ու պատանի մասնակցել են բազմաբնույթ մեծ եւ փոքր միջոցառումների, ցուցահանդեսների, մենահամերգների, հանդիսությունների, մրցույթների եւ այլ ծրագրերի։ Հաշվետու տարում Արցախից տեղահանված

ընտանիքների երեխաներն անվճար հիմունքներով հաճախել են Հայորդյաց տներ։

Հանրակրթական դպրոցներ

Հաջողությամբ ընթացել են ՀԵՊ առարկայի օլիմպիադայի մարզային եւ հանրապետական փուլերը, որոնց հարցաշարերը կազմել է ՔԴԿ գրասենյակը։

Ջնայած համավարակի հարուցած խոչընդոտներին՝ կազմակերպվել է 8 սեմինար-դասախոսություն՝ Երեւանի, Արմավիրի եւ Կոտայքի մարզերի ՀԵՊ ուսուցիչների համար։ Հայաստանի աստվածաշնչային ընկերության հետ համագործակցությամբ՝ մարզերում իրականացվել են Ավետարանի ուսուցման խաղ-վիկտորինաներ։ Ամանորին ընդառաջ՝ այցեր են կազմակերպվել դպրոցներ, մանկապարտեզներ, երեխաներին բաժանվել են նվերներ։

ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ իրականացվել է «Սփյուռքի ուսուցիչների վերապատրաստում 2021» ծրագիրը։ ՔԴԿ գրասենյակի միջոցով Հայաստանի տարբեր մարզերից Մայր Աթոռ է այցելել 1300 աշակերտ։

Այս ոլորտում լրջագույն խնդիր է «Հայ Եկեղեցու պատմություն» առարկայի դասաժամերը ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից կրճատելու նախաձեռնությունը։ Այս հարցն սկզբունքային նշանակություն ունի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համար, քանի որ «Հայ Եկեղեցու պատմություն» առարկան հանրակրթական դպրոցներում 15 տարուց ի վեր դասավանդելու ընթացքում արժանացել է աշակերտների, ծնողների, ուսուցչական անձնակազմի բարձր գնահատականին՝ մեր մատաղ սերնդին ավանդելով ազգային եւ հոգեւոր արժեքներ եւ սեր առ հայրենին։

«Էօրնեկեան» դպրոց եւ մանկապարտեզ

«Էօրնեկեան մանկապարտեզ» է հաճախել 2,5—5 տարեկան 40 երեխա։ Մանկապարտեզում նշվել են ազգային-եկեղեցական

տոները, ինչպես նաեւ ուխտագնացություններ են կազմակերպվել հայոց սրբավայրեր։

«Էօրնեկեան հանրակրթական դպրոց»-ի 33 դասարաններում հաշվետու տարում ուսանել է 497 աշակերտ։

Դպրոցի սովորողները աշխույժ կերպով մասնակցել են ներդպրոցական, քաղաքային, մարզային եւ հանրապետական օլիմպիադաներին։ Անգլերենի օլիմպիադայի հանրապետական փուլում ունեցել ենք 1-ին մրցանակ։

Դպրոցի տնօրինությունը, աշակերտական եւ ծնողական խորհուրդները պարբերաբար կազմակերպել են այցելություններ սրբավայրեր, աշակերտները մասնակցել են կիրակնօրյա Պատարագներին։

Բոլոր 36 շրջանավարտներն ընդունվել են ՀՀ առաջատար բուհեր, իսկ մեկը՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարան։

Տարվա ընթացքում աշակերտները մասնակցել են նաեւ հանրապետական եւ միջազգային մի շարք հեղինակավոր մրցույթների, փառատոնների եւ ֆորումների՝ դպրոց բերելով բազմաթիվ դիպլոմներ, պատվոգրեր, մեդալներ եւ մրցանակներ։

ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Անցյալ տարում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քարոզչական գործունեությունը ծավալվել է հետեւյալ ուղղություններով

ՀՀ զինված ուժեր

Հաշվետու տարում բանակի հոգեւոր սպասավորները Հայաստանի եւ Արցախի տարբեր զորամասերում կազմակերպել են միջոցառումներ, Սուրբ Գրքի սերտողություններ, ինչպես նաեւ անհատական զրույցներ, հանդիպում-քննարկումներ են տեղի ունեցել սպայական եւ շարային անձնակազմերի հետ։ Բանակի հոգեւոր առաջնորդությունը շարունակել է հոգեխնամ գործունեությունը, որի շրջանակներում հաշվետու տարում տեղի են ունեցել հանդիպումներ վիրավոր, զոհված կամ անհետ կորած

համարվող զինծառայողների ընտանիքների հետ։ Տարվա ընթացքում Արցախյան 44-օրյա պատերազմի զոհերի հիշատակին զորամասերում կառուցվել են հուշակոթողներ, կանգնեցվել եւ օրհնվել են խաչքարեր։ Զորամասերում եւ մարտական դիրքերում կառուցվել են նաեւ մատուռներ։ Ավարտին են հասցվել եւ օծվել Երեւանի զինվորական կայազորային հոսպիտալի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցին եւ Արմավիրի կայազորի Սուրբ Վարդանանց բաց խորանը, ավարտին է հասցվել Գյումրիի հակատանկային հրետանային գնդի Սուրբ Թադեոս եկեղեցին։

Նշված տարում Հայոց բանակում ծառայել է 49 հոգեւոր սպասավոր (1 վարդապետ, 14 քահանա եւ 34 սարկավագ)։

Հայ եկեղեցու համաշխարհային երիտասարդաց միավորում (ՀԵՀԵՄ)

ՀԵՀԵՄ-ն անցյալ տարի եւս շարունակել է իր առաքելությունը՝ կազմակերպելով տարբեր գիտաժողովներ եւ միջոցառումներ։ Թեմերի եւ եկեղեցապատկան կառույցների հետ քննարկվել են ծրագրեր, մասնակցություն է ցուցաբերվել համացանցում թեմերի, համայնքների գործունեությանը, լուսաբանվել է թեմերի եւ եկեղեցապատկան երիտասարդական կառույցների գործունեությունը։

Քրեակատարողական հիմնարկներ (ՔԿՀ)

2021-ին 12 ՔԿՀ-ներում սպասավորող 10 հոգեւորական (1 վարդապետ եւ 9 քահանա) շարունակել է հոգեւոր խնամքը եւ տարատեսակ օժանդակությունները ազատազրկվածներին, նրանց ընտանիքներին եւ նախկին դատապարտյալներին։ Հիմնարկներում անցկացվել են հանդիպումներ, Աստվածաշնչի սերտողություններ, առանձնազրույցներ։ Մայր Աթոռն ազատազրկվածներին տրամադրել է աղոթագրքեր եւ հոգեւոր գրականություն։ Աշխատանքներ են տարվել նաեւ ՔԿ վարչության հիմնարկների աշխատակիցների հետ։

2021-ին օծվել է «Արմավիր» ՔԿ հիմնարկի 3-րդ մասնաշենքի «Սուրբ Նշան» մատուռը՝ ձեռամբ Գերշ. Տ. Մուշեղ եպս. Բաբայանի։

Հանրային քարոզչություն

Հանրային քարոզչությունն իրականացվել է հեռուստահաղորդումների, համացանցային հրապարակումների, տպագրվող ամսագրերի, թերթերի եւ գրքերի, Մայր Աթոռի թանգարանների ու գրադարանների միջոցով։

Հաշվետու տարում կանոնավոր կերպով շարունակել է իր աշխատանքները «Շողակաթ» հեռուստաընկերությունը, ինչպես նաեւ տպագրվել են «Էջմիածին» ամսագիրը, «Քրիստոնյա Հայաստան» թերթը։

Հրատարակչական բաժինը տպագրության է հանձնել 30 անուն գիրք։ «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանը համալրվել է 1658 միավոր նոր գրականությամբ։ Շարունակվել են գրքերի քարտային եւ էլեկտրոնային մատենագիտական նկարագրությունների մշակման, ընթերցողների սպասարկման եւ գրքերի թվայնացման ամենօրյա աշխատանքները։

Անցյալ տարի թանգարաններ է այցելել 20 577 անձ։

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվետու տարվա ընթացքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի սոցիալական ծառայությունների գրասենյակն իրականացրել է, ընդհանուր առմամբ, 457 259 744 ՀՀ դրամի բարեգործական եւ սոցիալական ծրագրեր, որոնց ուղղակի շահառու է դարձել 6531 ընտանիք (շուրջ 30 000 անձ)։ Տրամադրվել է դրամական, իրային, առողջապահական եւ պարենային աջակցություն։ Իրականացվել են Արցախի աջակցության ծրագրեր։

2020 թ. նոյեմբերի 25-ին Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ հաստատված «Արցախի աջակցության հանձնախումբ»-ն Արցախյան պատերազմի հետեւանքով նյութական ծանր կացության մեջ հայտնված

արցախահայությանը բացառապես մարդասիրական ծրագրերով օգնելու նպատակով իրականացրել է.

1. Շուրջ 100000.000 ՀՀ դրամի աջակցություն Արցախյան պատերազմի հետեւանքով Ադրբեջանի տիրապետության տակ անցած բնակավայրերի՝ 4 եւ ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքներին։

2. Արցախի թեմի՝ բնակարան կորցրած հոգեւորականներին փոխհատուցում 17 957 450 ՀՀ դրամի չափով։

3. Իզմիրլյան հիմնադրամի ֆինանսավորմամբ՝ սննդամթերքի եւ հիգիենայի պարագաների աջակցության ծրագրեր 44-օրյա պատերազմից տուժած եւ Հայաստանում ապաստանած 1074 ընտանիքի՝ 28 000 000 ՀՀ դրամի չափով։

4. 790 ընտանիքի համար սննդի փաթեթների բաշխում՝ 9 822 852 ՀՀ դրամի չափով։

Մայր Աթոռի մանկախնամ գործունեությունը ծավալվել է «Քյուրքչյան» եւ «Նագաշյան մանուկների տուն» կենտրոններում։

ՎԱՆՔԵՐ, ԵԿԵՂԵՑԻՆԵՐ ԵՒ ԹԵՄԵՐ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ենթակայության ներքո են գործում 35 թեմ եւ 3 հայրապետական պատվիրակություն, Մայր Աթոռի Ս. Վարդան եւ Ս. Հովհաննես մատուռ-մկրտարանը, Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցին, Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցին, Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե, Խոր Վիրապ, Ս. Գեղարդի եւ Սեւանա վանքերը։

Ըստ ստացված տվյալների՝ թեմերում եւ եկեղեցական կառույցներում գործում են 670 եկեղեցի ու վանք, 650 ծուխ եւ ծխական առաքելություն, 210 կիրակնօրյա դպրոց, տիկնանց՝ 144, եւ երիտասարդաց՝ 180 միություն։ Անցած տարում կատարվել է 50 011 մկրտության եւ 15 107 պսակադրության արարողություն։ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի աշխարհասփյուռ թեմերում իրենց ծառայությունն է բերում 747 հոգեւորական։

Անցած տարում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո կառուցվել, օծվել եւ վերաօծվել են մի շարք եկեղեցիներ։ Ի մասնավորի՝ Գուգարաց թեմում 2021 թվականին օծվել է Ակներ համայնքի Սուրբ Գեւորգ եկեղեցին, վերաօծվել է Լեռնանցք համայնքի Սուրբ Մինաս եկեղեցին։

Արագածոտնի թեմում 2021-ին օծվել է Սրբոց Հրեշտակաց եկեղեցին։ Ամբողջովին հիմնանորոգվել եւ օծվել է Թալինի տարածաշրջանի՝ Կարմրաշենի Սուրբ Աստվածածին եկեղեցին։

Կոտայքի թեմում հաշվետու տարում օծվել է Ֆանտանի Սբ. Խաչ մատուռ-եկեղեցին։

Գեղարքունյաց թեմում անցյալ տարի օծվել են Գագարինի Սուրբ Խաչ եւ Գեղհովիտի Սուրբ Նշան մատուռները։

Վայոց Ձորի թեմում հաշվետու տարում օծվել է Ռինդ համայնքի նորակառույց Սուրբ Աստվածածին եկեղեցին։

Տավուշի թեմում անցյալ տարի օծվել է Ենոքավանի նորակառույց Սբ. Աստվածածին եկեղեցին։ Թեմի մի շարք համայնքներում օծվել են եկեղեցիների եւ մատուռների հիմքեր։

Արթիկի թեմում անցյալ տարի կառուցվել եւ օծվել է Ս. Աբրահամ մատուռը։

Մասյացոտնի թեմում հաշվետու տարում օծվել է Սրբոց Նահատակաց մատուռը։

Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմում հաշվետու տարում օծվել է Տամբով քաղաքի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցին։

Հարավային Ռուսաստանի հայոց թեմում ընթացիկ տարում օծվել են Նովոռոսիյսկ եւ Ստավրոպոլ քաղաքների Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիները։